

ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ*

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՏՈՀՄԵՐ

Անի քաղաքի եկեղեցական կյանքի պատմության մեջ հետաքրքիր էջեր են ներկայացնում նրա քահանայական տոհմերի (տների) մասին պահպանված վկայությունները[37]: Պարզվում է, որ քաղաքում ոչ միայն եպիսկոպոսական Աթոռն ու մի շարք եկեղեցիներ էին տոհմական, այլև կային քահանայական տներ, որոնց ներկայացուցիչները սերնդե սերունդ սպասավորում էին այս կամ այն եկեղեցում: Այդօրինակ ժառանգականության մասին պահպանված հնագույն վկայությունը 1035 թվականից է: Անիի Ս. Փրկչի եկեղեցին կառուցող Աբղարիբ մարզպանը շինարարական արձանագրության վերջում եկեղեցու ինչքի հափշտակության դեմ ուղղված «անեծքի բանաձևից» հետո ավելացնում է. «... եւ որ **զԳրիգոր իրիցու որդիքս յեկեղեցապանութենէ հանէ,** կրկին անիծիցդ պարտական լիցի, իսկ կառուցիչ գրիս՝ աւրհնեալ լիցի...»[38]: Այսինքն, Աբղարիբը սահմանում է, որ իր կառուցած եկեղեցու եկեղեցապանությունը պատկանելու է Գրիգոր երեցի որդիներին, նրանց սերնդին:

Նույն Աբղարիբ մարզպանը երկու տարի անց իր մոր՝ Շուշան Պահլավունու կառուցած Ս. Հակոբ եկեղեցու քահանայությունը «որդոց որդի» հանձնում է Գեորգ երեցին. «... եւ Ապղարիպ մարզպան **ետու զՍուրբ Յակովբ Գէորգ իրիցու՝ որդեցէ յորդիս...»**[39]:

---

* Սկիզբը տես № № ԺԱ—ԺԲ:

[37] Քահանայական տոհմերն ընդհանրապես տարածված էին միջնադարյան Հայաստանում: Օրինակ, Մաշտոց Ա կաթողիկոսի մասին ասվում է, թե «սա էր ի տոհմէ քահանայական ի գեղջէն Եղէվարդայ...» (**Գ. Հովսեփյան,** Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 89), իսկ Հովհաննես Սարկավագի մասին նշվում է, որ նա ծագում էր «ի գաւառէն Փառիսոսայ, ի քահանայական ազգէ» (**Վարդան Արևելցի,** էջ 159):

[38] Դիվան..., էջ 46:

[39] Նույն տեղում, էջ 49:

1236 թ. Անիի Կաթողիկեին Ավետարան նվիրաբերած Նացուալը հիշատակարանում նշելով եկեղեցու երեք սպասավորներին՝ Դասապետ, Գերասամ քահանաներին և Սարգիս սարկավագին, շեշտում է, որ մատյանը տվել է նրանց «որդիցէ յորդիք»[40], որից կարելի է ենթադրել, թե վերջիններս ազգականներ էին, և այստեղ նույնպես գործ ունենք քահանայական տան հետ:

Հետաքրքիր են ԺԲ դարի նշանավոր պատմագիր, Անիի Կաթողիկեի ավագերեց Սամուել Անեցու ժառանգների մասին պահպանված վկայությունները: 1233 թ. նրա թոռը՝ Աբրահամ երեցը, նվիրատվություն է կատարել Խծկոնքի վանքին: Արձանագրության մեջ նա հիշում է հորը՝ Սարկավագ քահանային, և համբավավոր պապին, վերջինիս հիշատակին նվիրելով կատարած նվիրատվության դիմաց ստացած վեց պատարագներից երկուսը: Ահա այդ արձանագրությունից մի հատված. «Ի ՈՁԲ (1233) թուիս շնորհիւն Քրիստոսի, **ես Աբրահամ երէց, որդի Սարկաւագ քահանայի, թոռն Սամուէլ երիցոյ Անեցի** ետու զիմ գանձագին Բ (2) տուն նորաշէն եւ ի վերէն Բ (2) կուղպակ ի Սուրբ Ուխտս ի Խծկաւնս... եւ փոխարէն հատուցէն մեզ յամենայն ամի Զ (6) աւր պատարագ՝ Դ (4) Աբրահամու եւ Բ (2) տէր պապ երիցու...»[41]: Արձանագրության շնորհիվ մեզ հայտնի է դառնում, որ Սամուել Անեցու քահանա որդին Սարկավագ անունն է կրել: Տեղին է հիշել, որ Անեցին ժամանակին աշակերտել է մեծ ուսուցչապետ Հովհաննես Սարկավագին, որից հետո բնական պետք է լինի ենթադրությունը, թե Սամուելը որդուն Սարկավագ է անվանակոչել ի պատիվ սիրելի ուսուցչի:

Միանգամայն հնարավոր է, որ Սամուելի որդի Սարկավագն է 1151 թ. նորոգել Անիի Ս. Սարգիս եկեղեցին, որը գրականության մեջ երբեմն կոչվում է նաև Սարկավագի եկեղեցի: Պահպանված արձանագրությունը վկայում է. «Ի թուին Ո (1151) ես Սարկաւագ քահանա զայս ծերացեալ տաճարս Սրբոյն Սարգսի վերըստին նորոգեցի ի հրմանէ ի յիմոց գուց. Որք ի ներկայդ էք զիս եւ ծնաւղս յիշեսջիք ի Քրիստոս Յիսուս»[42]: Այն արձանագրությունը Անիի Շեդդադյան տիրապետության շրջանից հայտնի առաջին շինարարական վկայագիրն է: Հիշենք, որ այդ ժամանակ եկեղեցաշինության համար բնավ էլ նպաստավոր պայմաններ չէին և նման գործ կարող էր կատարել միայն քաղաքում ամուր դիրք ու հենապան ունեցող մեկը: Սամուել Անեցին, որը նույն այդ տարիներին Մայր տաճարի ավագերեցն էր, անմիջական կապեր ուներ ժամանակի հայոց կաթողիկոսի՝ Գրիգոր Գ Պահլավունու հետ, որի պատվերով էր գրում իր «Ժամանակագրությունը» և հետևաբար, բավական ճանաչված անձնավորություն էր, կարող էր իր որդի Սարկավագի ձեռնարկի երաշխավորը հանդիսանալ, նրան նաև օժանդակելով նյութապես ու բարոյապես: Սարկավագի արձանագրության վերջաբանը ևս ասես հուշում է այս իրողության մասին: Այն ոչ թե ուղղված է հետագա սերունդներին, այլ «ծերացյալ» տաճարը հիմնովին նորոգված տեսնելու եկած ներկաներին՝ «Որք ի ներկայդ էք զիս եւ ծնաւղս յիշեսջիք...»:

Սամուելի թոռ և Սարկավագի որդի Աբրահամ երեցից հետո այս քահանայական տոհմը շարունակվել է թե ոչ, հայտնի չէ: Խծկոնքի 1233 թ.

---

[40] ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 198:

[41] **Ն. Սարգիսյան**, նշվ. աշխ., էջ 211:

[42] Դիվան..., էջ 56:

արձանագրության մեջ Աբրահամը հիշատակում է իր մի քանի ազգականներին (Խոցադեղին, Հովհաննես երեցին, Տիրանցին, Շահմամին), որոնք արդեն մահացել էին և թաղվել վանքի Ս. Սարգիս եկեղեցու մոտ[43]: Ինչևէ, Անեցի մատենագրի տոհմի երեք սերնդի մասին պահպանված վկայությունն արդեն իսկ ուշագրավ իրողություն է (այս առումով Սամուել Անեցին հայ միջնադարյան պատմիչներից թերևս ամենաբախտավորն է):

Մեկ այլ քահանայական տան մասին տեղեկություն է պահպանվել Անիի Ս. Փրկչի եկեղեցու 1193 թ. արձանագրության մեջ: Շեդդադյանների տիրապետության վերջին շրջանում, երբ քաղաքի հայ բնակչությունն ավելի մեծ ինքնուրույնություն ուներ, վերականգնվում էին եկեղեցիներ, կառուցվում ժամատներ, կանգնեցվում խաչքարեր: Այս ժամանակ է, որ Տրդատ քահանան ու նրա կին Խուշուշը տեր են դառնում Աբլղարիբ մարզպանի կառուցած Ս. Փրկչի եկեղեցուն, արձանագրության մեջ այն անվանելով՝ «զմեր գանձագին հայրենիքս»[44]: Նրանք նորոգում են եկեղեցին, կառուցում ժամատուն, տալիս բազմաթիվ ընծաներ: Արձանագրության սկզբում Տրդատը նշում է իր քահանա նախնիներին, գրելով. «...Արդ ես **Տրդատ քահանա, որդի Սոսթէնէս քահանայի, թոռն Գէորգա՝ աւագերիցո Արճոյ...**»[45]: Դժվար է որոշել, Տրդատի պապ Գեորգը արուճեցի՞ էր, թե՞ անեցի: Ինչպես երևում է ամուսինների՝ Ս. Փրկչին տված անշարժ գույքի թվարկումից, նրանց «հայրենի ժառանգությունը» գտնվում էր Արուճում[46]: Տրդատի հոր՝ Սոսթենես քահանայի մասին այլ տեղեկություններ չկան: Անիի շրջանին վերագրվող ԺԲ դարի վերջերի մի ձեռագրի (Մատենադարան, № 7635) խորաններից մեկում պահպանվել է «Զմեղապարտ եւ անարժան գրիչ Սոսթենէս յիշեսջիք ի Տէր»[47] հիշատակարանը, իսկ 1219-ին Սոսթենես անունով միաբան է հիշվում Հառիճում[48], բայց դժվար է ասել, թե սրանք կապ ունեն Տրդատի հետ:

Ս. Փրկչի արձանագրության մեջ երբ նշվում են Տրդատին ու կնոջը հատկացվելիք պատարագները, հիշվում է նաև Սարգսիկ անունով մեկը՝ Սողոմոնի որդին («...պարտին ժառանգորդք զկնի մեր կատարել ամենայն ամի Խ (40) մի Ի (20) Տրդատա, Ի (20) տիկին Խուշուշին եւ Բ (2) Սարգսկանն, որդո Սողոմոնի անխափան կատարել»)[49]: Վերջինս հավանորեն ազգակցական կապ ուներ Տրդատի հետ (հնարավոր է, որ Սողոմոնն ու Սոսթենեսը եղբայրներ էին):

---

[43] **Ն. Սարգիսյան,** նշվ. աշխ., էջ 211: Անիի Կաթողիկեի 1286 թ. մի արձանագրության մեջ հիշվում է եկեղեցու ավագերեց Սարկավագը (Դիվան..., էջ 36): Որևէ փաստական հիմք չունենք այս Սարկավագին Սամուելի տոհմի հետ առնչելու համար: Սակայն, տեսականորեն չի բացառվում, որ նա իր անունը ստացած լինի պապի կամ ապուպապի անունից, որպիսին կարող էր լինել նաև Սամուելի որդի Սարկավագը:

[44] Դիվան..., էջ 47:

[45] Դիվան..., էջ 47:

[46] «...Ես Տրդատ երեց եւ լծակից իմ Խուշուշ ի մեր հայրենի ժառանգութեանց ի սպաս պիտոյից հացի եւ գինոյ տուաք չորս այգի յԱրուճ՝ զՍաղար, եւ զՇլիկ եւ զԿովրածն եւ Բլար Խաչկայն եւ տուն եկեղեցոյն դիմաց. մեծ արտ Բեխենցն...» (Դիվան..., էջ 47): Արուճն այդ շրջանում բարգավաճ ավան էր, որը սերտ կապեր ուներ Անիի հետ (**Կ. Մաթևոսյան**, Արուճ, Երևան, 1987, էջ 28—35):

[47] ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 252:

[48] Նույն տեղում, էջ 114:

[49] Դիվան..., էջ 47:

Անիի քահանայական երկու ընտանիքի հանդիպում ենք քաղաքի ԺԴ դարի գաղթականության այն հատվածի մեջ, որը հաստատվել էր Պարսկաստանի նորաշեն Սուլթանիա քաղաքում: Այս տների առավել հայտնի ներկայացուցիչներն էին նշանավոր գրիչ, ծաղկող, կազմարար Մխիթար Անեցին և նրա հոգևոր հայրը՝ գրասեր Գրիգոր քահանան: Մխիթարը, որը մի շարք ձեռագրեր է ընդօրինակել Սուլթանիայում, 1334 թ. Ավետարանի (Երուսաղեմ, № 1941) հիշատակարանում նշում է, որ իրեն հորդորել են գործը սկսել նկարիչ Ավագը և Գրիգոր Անեցին («... եւ բազմերախտ հոգեւոր հայրն մեր, **ստոյգ քարտուղարն եւ անհաս ընթերցողն՝ Գրիգոր երէց Անեցի»)**[50]: Այնուհետև Մխիթարը հիշատակում է իր ընտանիքի անդամներին՝ «... յիշել աղաչեմ... զՄխիթար մեղօք մեռեալ ոգի, անարժան գծող սորին... նաեւ զծնօղսն իմ ըստ մարմնոյ, **զհայրն իմ՝ զտէր Յակոբ քահանայ** եւ զմայրն իմ՝ զՍեդա խաթուն եւ **զհարազատ եղբարսն իմ՝ զԳրիգոր քահանայ եւ զԳէորգ քահանայ** եւ զքոյրն իմ՝ զՋալալն...»[51]:

Այսպիսով, պարզվում է, որ անեցի Հակոբ քահանան ունեցել է երեք քահանա որդի՝ Գրիգոր, Գեորգ, Մխիթար: 1338 թ. ընդօրինակած Աստվածաշնչի (Մատենադարան, № 4429) չափածո հիշատակարանում Մխիթարը դարձյալ հիշատակում է իր ազգականներին, բայց նաև նշելով, որ նրանք արդեն մահացել են.

«Յիշեմ զգաւառն իմ հայրենին,
Զմայրաքաղաք ամուրն Անին,
Եւ ըստ մարմնոյ իմ ծնօղին՝
Տէր Յակոբա եւ Սեդային,
Եւ իմ եղբարցն հարազատին՝
Գէորգա եւ Գրիգորին,
Նայ և քվերն իմ՝ Ջալալին,
Որք են ննջեալ ի տապանին...»[52]:

Այս հիշատակարանում Մխիթարն առանձնակի ընդգծում է ավագ եղբորը, որպես իր ուսուցչի

(«... Երեց եղբօրն իմ Գէորգին,
Ըզկնի իմ շատ աշխատողին
Եւ առաջին իմ ուսուցչին...»)[53]:

Անեցի գրիչը չի մոռանում նաև իր համերկրացուն՝ Գրիգոր Անեցուն, ու նրա որդի Պարոնին, որը հավանաբար իր երիտասարդ տարիների ընկերն է եղել.

---

[50] **Ն. Պողարեան,** Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Զ, Երուսաղեմ, 1972, էջ 484: Ձեռագրի վերջում գրած հիշատակարանում Մխիթարը Գրիգորին կոչում է իր ուսուցիչն ու խրատատուն՝ «յիշեսջիք... զբազմերախտսն մեր, զուսուցիչսն մեր եւ զխրատիչսն, զհոգեւոր հայրն մեր զԳրիգոր քահանայ Անեցի եւ ...զԱվագ...»: Գրիչը հիշում է նաև իր մեկ այլ ուսուցչին՝ «Ծան Յակոբ քահանային» (Նույն տեղում):

[51] Նույն տեղում:

[52] ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմ. Լ. Խաչիկյան), Երևան, 1950, էջ 310:

[53] ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 310:

(«Մեղաւորիս գաւառակցին՝
Գրիգորու քահանային,
Սընընդակցին իմ՝ Պարոնին»)[54]:

Ինչպես պարզվում է այլ հիշատակարաններից, Գրիգոր Անեցին ևս քահանայի զավակ էր, ուներ քահանա եղբայր և որդի: 1326 թ. նա Սուլթանիայում Կարապետ գրչին պատվիրել է ընդօրինակել Իգնատիոսի՝ Ղուկասի ավետարանի մեկնությունը (Երուսաղեմ, № 453), որի հիշատակարանում նշվում են նրա ազգականները, ինչպես նաև Մխիթար Անեցին. «Աւրհնեսցէ Քրիստոս Աստուած ստացող սուրբ գրոցս **զԳրիգոր քահանայ եւ զհայրն իւր զԵփրեմ քահանայ եւ զմայր իւր զԱւագ տիկին եւ զեղբայրն իւր Սարգիս քահանայ** եւ զամուսին իւր Տիկնանցն եւ զանդրանիկ որդին իւր Մխիթար, զփոխեալն ի Քրիստոս, եւ զսրբասանեալ շառաւիղն լուսոյ՝ եւ զժառանգն աւրհնութեան զորդեակն իւր զՊարոն, զոր Տէր Աստուած ընդ երկայնաւուրս արասցէ: Նա եւ զհոգեւոր եղբայրն մեր՝ **զՄխիթար Անեցի**՝ զերախտաւորն մեր...»[55]:

Նույն հիշատակարանում Կարապետ գրիչը, անկասկած ստացողի պահանջով, նշում է նրա Անիից գաղթելու ու Սուլթանիա գալու պատճառը՝ «Եւ ունէր սա զբնակութիւնս իւր ի մեծ մայրաքաղաքն Անի: Արդ, վասն աւերման աշխարհին իւրեանց, եւս առաւել՝ վասն մայրաքաղաքին Անոյ, եկեալ բնակէր ի տեղիս յայս...»[56]: Գրաւեր Գրիգոր Անեցին 1341 թ. նույն Կարապետ գրչին Սուլթանիայում պատվիրել է մի Աստվածաշունչ (Վենետիկ, № 935/8) և այն ստանալով նվիրել որդուն՝ Եփրեմ քահանային: Ինչպես երևում է, իր այս՝ թերևս կրտսեր որդուն Գրիգորը կոչել է հոր անվամբ: Հիշատակարանում նշվում է, որ Գրիգորը ձեռագիրը ստացել է «ի ժառանգութիւն զաւակի իւրոյ՝ պատուական քահանային Եփրեմի»[57], իսկ վերջինս 1354-ին մատյանը նվիրել է Վարագավանքին, թողնելով համապատասխան հիշատակարան՝ «ես նուաստ Եփրեմ քահանայ, որ ունէի զգիրքս Աստուածաշունչ ի Հօրէ իմմէ ի Գրիգոր քահանայէ, նուիրեցի և ետու զսա ուխտիս Վարագայ Սուրբ Նշանին...»[58]:

Այսպիսով, բերված հիշատակարանները մեզ ծանոթացնում են Անիի հոգևորականության տարբեր մի հատվածի ներկայացուցիչներին, որոնք քա-

---

[54] Նույն տեղում, էջ 309: Հիշատակարանների ժողովածուում Պարոնի անունը գրված է փոքրատառով, մինչդեռ ինչպես երևում է Գրիգոր Անեցու 1326 թ. հիշատակարանից, վերջինիս որդու անունը Պարոն էր և Մխիթար Անեցին անկասկած հենց նրան նկատի ունի: Նույն հիշատակարանում Մխիթարը նշում է իր չորս աշակերտներին՝ Արաբուդին, Թաթոսին, Սայինբեկին, Գրիգորին:

[55] **Ն. Պողարյան,** Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Բ, Երուսաղեմ, 1967, էջ 420: Այս ձեռագրին անդրադարձած Ա. Մարտիրոսյանը գրիչ Կարապետին չգիտես ինչու կոչում է վարդապետ և ենթադրում, թե նա էլ էր անեցի (**А. Мартиросян,** Армянские поселения на территории Ирана в XI—XV вв. Ереван, 1990, с. 201) Մինչդեռ հիշատակարանում Կարապետն ընդհանրապես չի հայտնում իր հոգևոր կոչումը և ոչ մի ակնարկ չի անում, թե ինքը Գրիգորի համերկրացին է:

[56] **Ն. Պողարյան,** Ցուցակ... հ. Բ, էջ 420:

[57] ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 328: Հիշատակարանում մեծ գովեստով է խոսվում Գրիգորի մասին՝ «...վեհիմաստ քահանայն Աստուծոյ Գրիգոր, որ և ինքն իսկ ունէր զշնորհս վարդապետութեան՝ զօրեղ բանիւ լեզուաց և վկայութեամբ Սրբոց Գրոց, և լիապէս զարդարեալ առաքինութեամբ և իմաստութեամբ...»:

[58] Նույն տեղում, էջ 328, 406:

ղաքացիներից շատերի պես հարկադրված էին թողնել հայրենի քաղաքը: Հատկանշական է, որ անեցիները գաղթել են տոհմերով, ընտանիքներով, և դրանց մեջ եղել են նաև քահանայական տներ:

Անի քաղաքի հոգևորականության վերաբերյալ կարելի է բազմաթիվ այլ տեղեկություններ վկայակոչել, մասնավորապես անդրադառնալ հոգևորականության թողած ճանրակշիռ մշակութային ավանդին և այլն, սակայն առայժմ բավարարվենք վերը ասվածով և վերջում ներկայացնենք Անի քաղաքի ու նրա մերձակա Հոռոմոս, Բագնայր, Արջո Առիճ վանքերի հոգևորականության համահավաք անվանացանկը: Յուրաքանչյուր անվանը կից բերում ենք համառոտ տեղեկություններ, սկզբնաղբյուրը չենք նշում, քանի որ ցանկության դեպքում այն գտնելը դյուրին է (եթե նշվում է, որ անունը արձանագրության մեջ է հիշվում, այն կարելի է գտնել արձանագրությունների ժողովածուից, եթե հիշատակարանից է՝ համապատասխան ժողովածուից՝ ըստ թվականի, կամ էլ նշվում է հիշատակող պատմիչի անունը և այլն):

ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՄԵՐՁԱԿԱ ՎԱՆՔԵՐԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Ա Ն Վ Ա Ն Ա Ց Ա Ն Կ

ԱԲԱՍ—եպիսկոպոս Խծկոնքի, հիշվում է վանքի 1233 և 1240 թթ. արձանագրություններում, նաև 1236 թ. Խծկոնքին նվիրաբերված մի Ավետարանի հիշատակարանում (Նոր Ջուղա, Ամենափրկիչ վանք, № 36): Նույն ձեռագրում հիշատակարան է գրվել նրա ու մյուս միաբանների անունից:

ԱԲԴԼՄԵՀ—Հիշվում է Խծկոնքի 1213 թ. մի արձանագրության մեջ. «Աբդլմեհի կրաանականս....»:

ԱԲԻՍՈՂՈՄ—անեցի վարդապետ, քաղաքի պալատական եկեղեցու երկու արձանագրություններում իրեն կոչում է կառուցող՝ «ես Աբիսողոմ վարդապետ շինեցի զեկեղեցիս...»:

ԱԲՐԱՀԱՄ—Բագնայրի վանահայր, հիշվում է վանքի 1262, 1266 թթ. և մի քանի անթվական արձանագրությունների մեջ:

ԱԲՐԱՀԱՄ—անեցի երեց, որդի Սարկավագ քահանայի, թոռ՝ Սամուել Անեցու: 1233 թ. Անիում գտնվող տուն ու կուղպակ է նվիրել Խծկոնքին:

ԱՆԱՆԷ—Պետրոս Գետադարձի քրոջ որդին, ապաստավորել է Անիի կաթողիկոսարանում:

ԱՆԱՆԻԱ—Հոռոմոսի վանահայր, 1013 թ. արձանագրության մեջ նշում է Գագիկ Ա-ի օժանդակությամբ իր կատարած գործերը:

ԱՆԴՐԵԱՍ—վարդապետ, Խծկոնքի միաբան, հիշվում է վանքի 1208 թ. մի արձանագրության մեջ:

ԱՆԴՐԵԱՍ—Արջո Առիճի վանահայր, հիշվում է 1289 թ. Որդեկ (Որդյակ) երեց Կողբացու նվիրատվական արձանագրության մեջ:

ԱՆԴՐԵԱՍ—Հոռոմոսի վանահայր, վարդապետ: Հիշվում է Անիի եպիսկոպոս Գրիգոր Ա-ի և Խուրլու խաթունի նվիրատվական արձանագրություններում (ԺԳ դարի 10-ական թթ.):

ԱՌԱՔԵԼ—անեցի վարդապետ (մականունը՝ Վատ), 1222 թ. Անիի մերձակա Մաղաբերդում Մխիթարի և Շերանի գործակցությամբ արարե-

րենից հայերեն է թարգմանել մի Երազահան: Ենթադրվում է, որ թարգմանել է նաև այլ գործեր:

ԱՌԱՔԵԼ—անեցի վարդապետ, հիշվում է 1160 թ. Աբրահամի կառուցած բուրգի արձանագրության մեջ՝ «... եւ զԱռաքել վարդապետ յաղուաթս յիշեսջիք»:

ԱՌԱՔԵԼ—քահանա, նահատակվել է 1208 թ. Կեչրորում, հիշվում է եղբոր՝ Խծկոնքում կանգնեցված մահարձան-խաչքարի արձանագրության մեջ:

ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ—Արջո Առիճի վանքի քահանա, ուսանել է նույն վանքում, 1236—37 թթ. մի Ավետարան է նվիրել վանքին: Որդու անունն է «Մանուիլ»:

ԱՎԵՏԻՍ—ծնունդով անեցի, վարդապետ, Սանահինի վանահայր, հիշվում է այդ վանքի մի քանի արձանագրություններում: 1250 թ. նվիրատվություն է կատարել Հոռոմոսին («ես Աւէտիս վարդապետ... ազգաւ ի մայրաքաղաքէս Անո...»):

ԱՎԵՏԻՔ—եպիսկոպոս, Հոռոմոսի վանահայր, հիշվում է վանքի 1751 թ. մի արձանագրության մեջ:

ԲԱՐՍԵՂ Ա ԱՆԵՑԻ—(որդի Վասակ իշխանի) 1072 թվականից Անիի և Ծիրակի եպիսկոպոս, 1081-ից՝ աթոռակից կաթողիկոս, 1105-ից՝ Ամենայն հայոց կաթողիկոս, մահացել է 1113 թ.:

ԲԱՐՍԵՂ Բ ԱՆԵՑԻ—(որդի Հասան Մագիստրոսի) Անիի և Ծիրակի արքեպիսկոպոս, 1195-ից՝ կաթողիկոս: Հիշվում է բազմաթիվ սկզբնաղբյուրներում 1160—1199 թթ.:

ԲԱՐՍԵՂ Գ—(որդի Ամիր Երկաթի) Անիի արքեպիսկոպոս և Հոռոմոսի վանահայր, հիշվում է Հոռոմոսի 1229—53 թթ. բազմաթիվ արձանագրություններում, 1239-ին՝ Անիում (որպես արքեպիսկոպոս):

ԲԱՐՍԵՂ ԲԱՇԽԱՏԵՑԻ—Սպասավորել է Անիի կաթողիկոսարանում ԺԱ դարի առաջին կեսին (ըստ Մատթեոս Ուռհայեցու):

ԲԱՐՍԵՂ—Գրիգոր Մագիստրոսի աշակերտներից, որին եղբոր՝ Եղիսեի հետ ուղարկել է Անի Պետրոս Գետադարձի մոտ ուսանելու և կաթողիկոսարանում սպասավորելու համար:

ԲՈՒԼԽԱՐ—Անիի կաթողիկոսարանի վարդապետ ԺԱ դարի առաջին կեսին (Մատթեոս Ուռհայեցի):

ԳԱՄԱՂԻԵԼ—Բագնայրի վանքի միաբան, վարդապետ, հիշվում է վանքի ԺԳ դարի մի արձանագրության մեջ:

«ԳԱՆՁԱԿԵՑԻ»—միայնակյաց (անունը չի պահպանվել), 55 տարի ճգնավորական կյանք վարելուց հետո, եկել է Անի և որոշ ժամանակ անց այստեղ մահացել ու թաղվել: Նրա գերեզմանն անեցիների շրջանում ուխտավայր է դարձել (ԺԳ դար): Հիշվում է Ս. Առաքելոց եկեղեցու մի արձանագրության մեջ:

ԳԵՐՍԱՄ—Անիի Մայր տաճարի քահանա, հիշվում է 1236 թ. Նացուալի՝ եկեղեցուն նվիրած ձեռագրի հիշատակարանում:

ԳԵՐՍԱՄ—Արջո Առիճի վանքի միաբան (ԺԳ դարի սկիզբ), հիշվում է Գրիգոր Ա եպիսկոպոսի արձանագրության մեջ:

ԳԷՈՐԳ—անեցի երեց, հիշվում է Աբլղարիբ մարզպանի 1037 թ. արձանա-

գրության մեջ: Նրան և նրա ժառանգներին է հանձնվել Անիի Ս. Հակոբ (Շուշան Պահլավունու) եկեղեցու սպասավորության գործը:

ԳԷՈՐԳ—Հոռոմոսի միաբան (վանահորից հետո երկրորդ մարդը), հիշվում է Հովհաննես Սմբատ թագավորի 1036 թ. արձանագրության մեջ:

ԳԷՈՐԳ—«Ջուլհակորդի», Անիի կաթողիկոսարանի սպասավոր ԺԱ դարի առաջին կեսին (Մատթեոս Ուռհայեցի):

ԳԷՈՐԳ—գրիչ, կազմարար, Անիի կաթողիկոսարանի սպասավորներից: 1046 թ. ձեռագիր է ընդօրինակել Պետրոս Գետադարձի պատվերով, գրել ընդարձակ հիշատակարան, որի մի մասը՝ ստացողի անունից:

ԳԷՈՐԳ—Հոռոմոսի միաբան, երեց (հավանաբար ծնունդով Անիից, քաղաքում գտնվող իր հայրենի տները կտակել է վանքին), «...Գէորգ ծեր երէց...» (ԺԳ դար):

ԳԷՈՐԳ—վարդապետ, 1278 թ. Բագնայրում ստացել է մի ձեռագիր և գրել հիշատակարան:

ԳԷՈՐԳ—անեցի քահանա, Հակոբ քահանայի որդին: Հիշվում է եղբոր՝ Մխիթար Անեցու 1334 և 1338 թթ. հիշատակարաններում:

ԳՅՈՒՏԻԿ—«կրոնավոր», Հոռոմոսի վանքին է նվիրել Անիում գտնվող իր հայրենի տունը (ԺԳ դար):

ԳՈՐԳ—անեցի քահանա, հիշվում է Անիում, մի արձանագրության բեկորի վրա:

ԳՐԻԳՈՐ Ա (Մագիստրոս)—Անիի և Շիրակի արքեպիսկոպոս, Աբուղամրի որդի: Հիշվում է 1213—1233թթ.:

ԳՐԻԳՈՐ Բ—Անիի եպիսկոպոս, հիշվում է 1277 թ.:

ԳՐԻԳՈՐ—անեցի երեց, որի որդիներին է հանձնվել քաղաքի Ս. Փրկչի եկեղեցու եկեղեցապանությունը: Հիշվում է 1035 թ.:

ԳՐԻԳՈՐ—անեցի քահանա, քաղաքի «Շախմատույին» կոչված եկեղեցու ավագերեցը (ԺԱ դար):

ԳՐԻԳՈՐ—Անիի վարդապետարանում աշակերտել է Հովհաննես Սարկավագին, եղել Սամուել Անեցու դասընկերը, որը և հիշում է նրան (ԺԱ դարի վերջ—ԺԲ դարի սկիզբ):

ԳՐԻԳՈՐ—Անիի Մայր տաճարի ավագերեց (նույնը նախորդի հետ՞), 1128 թ. քաղաքի Փատղուն ամիրան փորձել է ճնշում գործադրել նրա վրա, բայց արդյունքի չի հասել:

ԳՐԻԳՈՐ—Արջո Առիճի վանահայր, վարդապետ: Հիշվում է Գրիգոր Ա եպիսկոպոսի կանոնադրական արձանագրության մեջ (ԺԳ դարի սկիզբ):

ԳՐԻԳՈՐ—Խծկոնքի վանքի միաբան, հիշվում է 1236 թ. վանքին նվիրաբերված Ավետարանի հիշատակարանում:

ԳՐԻԳՈՐ—քահանա, 1258 թ. Մկրտիչ աբեղայի հետ նորոգել է Հոռոմոսի՝ Արուճում և Փարպիում գտնվող հնձանները:

ԳՐԻԳՈՐ—անեցի քահանա, 1292 թ. Անիում ապաստան է տվել Երզնկայից այստեղ եկած Ահարոն վարդապետին (հիշվում է վերջինիս հիշատակարանում):

ԳՐԻԳՈՐ—անեցի քահանա, Հակոբ քահանայի որդին: Հիշվում է եղբոր՝ Մխիթար Անեցու 1334 և 1338 թթ. հիշատակարաններում:

ԳՐԻԳՈՐ—անեցի քահանա, քաղաքի Ս. Աստվածածին (Խամբուշենց) եկեղեցու սպասավոր, հիշվում է մի անթվական արձանագրության մեջ:

ԳՐԻԳՈՐ—անեցի քահանա, Եփրեմ քահանայի որդին, 1326 թ. ձեռագիր է

ստացել Սուլթանիայում (Երուսաղեմ, № 453), ուր գաղթել էր Անիից: 1334 թ. նրան հիշում է նաև Մխիթար Անեցին:

ԳՐԻԳՈՐ—Հոռոմոսի վանքի առաջնորդ, եպիսկոպոս, հիշվում է 1485 թ. Սարգիս Գ կաթողիկոսի հիշատակարանում:

ԳՐԻԳՈՐ—Հոռոմոսի միաբան, աբեղա (Ակնագյուղեցի) 1782 թ. այստեղ մի ձեռագիր է ընդօրինակել (Երուսաղեմ, № 2025):

ԳՐԻԳՈՐ—Հոռոմոսի վանահայր, 1868—71 թթ. վանքում նորոգման աշխատանքներ է կատարել:

ԳՐԻԳՈՐԻՍ—Հոռոմոսի վանահայր, հիշվում է 1218 թ. մի նվիրատվական արձանագրության մեջ:

ԴԱՆԻԵԼ—վարդապետ Տիգրանակերտցի. 1685 թ. վերականգնել է լքված Հոռոմոսի վանքը:

ԴԱՍԱՊԵՏ—Անիի Մայր տաճարի քահանա, հիշվում է 1236 թ. եկեղեցուն նվիրաբերված Ավետարանի հիշատակարանում (անունը երկրորդ անգամ նշվում է «Դասական» ձևով):

ԴԱՎԻԹ—Անիի քաղկեդոնական համայնքի եպիսկոպոսը ԺԳ դարի սկզբին: 1223 թ. Վրաց թագավորության կողմից որպես պատվիրակ ուղարկվել է Հռոմի պապի մոտ:

ԴԱՎԻԹ—քահանա, հիշվում է Հոռոմոսի 1305 թ. արձանագրություններից մեկում («տէր Դաւիթ»):

ԵՂԲԱՅՐԻԿ—Անիի Բեխենց վանքի վանահայր, հիշվում է 1211 թ. «Հաղբատի Ավետարանում», Բեխենց գրչատան մեկ այլ ձեռագրում (ՄՄ, №№ 6288, 5554), ինչպես նաև Անիի բուրգերից մեկի 1222 թ. արձանագրության մեջ:

ԵՂԲԱՅՐԻԿ—անեցի աբեղա, 1298 թ. քաղաքի Ներքին բերդում մի Ավետարան է ընդօրինակել Հակոբ քահանայի պատվերով (Ս. Պետերբուրգ, Արևելագիտության ինստիտուտ, B 44):

ԵՂԻՍԵ—Գրիգոր Մագիստրոսի աշակերտներից, որին եղբոր՝ Բարսեղի հետ ուղարկել է Անի Պետրոս Գետադարձի մոտ ուսանելու և կաթողիկոսարանում սպասավորելու համար: Հետագայում դարձել է Սեբաստիայի եպիսկոպոս:

ԵՆՈՔ (ՅԵՆՈՎՔ)—Անիի կաթողիկոսարանի վարդապետ ԺԱ դարի առաջին կեսին (Արիստակես Լաստիվերցի):

ԵՓՐԵՄ—Անիի կաթողիկոսարանի քահանա ԺԱ դարի առաջին կեսին (Մատթեոս Ուռհայեցի):

ԵՓՐԵՄ—անեցի քահանա, որը ԺԴ դարի սկզբներին գաղթել է Սուլթանիա: Հիշվում է որդու՝ Գրիգորի 1326 թ. ստացած ձեռագրի հիշատակարանում:

ԵՓՐԵՄ—քահանա, նախորդ Եփրեմի թոռը, Գրիգոր քահանայի որդին: Հորից 1341 թ. մի Աստվածաշունչ է նվեր ստացել, որը հետագայում ընծայել է Վարագավանքին:

ԹԱԴԷՈՍ—Անիի կաթողիկոսարանի սպասավորներից, «որ է անպարտելի գրչութեամբ» (ԺԱ դարի առաջին կեսին), (Մատթեոս Ուռհայեցի):

ԹՈՐՈՍ—անեցի գրիչ, քաղաքում Ավետարան է ընդօրինակել 1379 թ.:

ԻԳՆԱՏԻՈՍ—Հռոմոսի վանքի միաբան, հմուտ գրիչ և մանրանկարիչ: Ունեցել է Քրիստոսատուր և Խաչատուր անուններով գործընկերներ և Հովսեփ անունով աշակերտ:

ԽԱՉԱՏՈՒՐ—Անիի կաթողիկոսարանի «դպրապետ» ԺԱ դարի առաջին կեսին (Մատթեոս Ուռհայեցի):
ԽԱՉԱՏՈՒՐ—Հռոմոսի վանահայր, հիշվում է 1174 թ. մի նվիրատվական արձանագրության մեջ և 1181 թ. Հովհաննես գրչի հիշատակարանում:
ԽԱՉԱՏՈՒՐ—Անիի վարդապետարանում աշակերտել է Հովհաննես Սարկավագին, եղել Սամուել Անեցու դասընկերը, որը և հիշում է նրան (ԺԱ դարի վերջ—ԺԲ դարի սկիզբ):
ԽԱՉԱՏՈՒՐ—անեցի քահանա, հիշվում է 1212 թ. Ս. Առաքելոց եկեղեցու մի արձանագրության մեջ:
ԽՍԱՉԱՏՈՒՐ—Անիի Բեխենց վանքի միաբան, հիշվում է ԺԳ դարի սկզբներին այստեղ գրված Ավետարանի հիշատակարանում (ՄՄ № 5554):
ԽԱՉԻԿ Բ ԱՆԵՑԻ—Ամենայն Հայոց կաթողիկոս՝ 1058—1065 թթ.:
ԽԱՉԻԿ—երեց, Հռոմոսի վանքի նվիրատու, ըստ պահպանված արձանագրության (հավանաբար ԺԳ դար):
ԽԱՉՈՒՏ—անեցի քահանա, հիշատակային բնույթի արձանագրություն է թողել Անիի Ս. Գրիգոր (Բախտաղեկի, կամ Խաչուտի) եկեղեցու բեմի զարդասալերի վրա (ԺԳ դար):

ԿԱՐԱՊԵՏ—Հռոմոսի վանքի միաբան՝ հոգևոր տեսուչ: Հիշվում է 1181 թ. Հովհաննես գրչի հիշատակարանում («... ի հոգեւոր տեսչութեան Կարապետի՝ ծերացելոյ իմաստիւք...»):
ԿԻՐԱԿՈՍ—անեցի երեց, Շահպատոնի և Նուրայ Խաթունի որդին, 1342 թ. Անիում ստացել է մի Ճաշոց: Կնոջ անունն է Գայանե:
ԿԻՐԱԿՈՍ—անեցի վարդապետ, 1348 թ. նահատակվել է մահմեդականների ձեռքով և թաղվել քաղաքի արվարձանում:
ԿՈՍՏԱՆԴԻՆ—քահանա, տոհմանունը՝ Հռոմեանց: Հիշվում է որդու՝ Հովհաննեսի 1213 և 1215 թթ. Արջո Առիճի և Բագնայրի նվիրատվական արձանագրությունների մեջ:

ՀԱԿՈԲ—անեցի քահանա, Կիրակոսի և Խելոքի որդին, ուսանել է Արջո Առիճի դպրոցում, 1298 թ. ստացել Անիի Ներքին բերդում ընդօրինակված մի Ավետարան:
ՀԱԿՈԲ—անեցի քահանա, հիշվում է որդու՝ Մխիթար Անեցու 1334 և 1338 թթ. հիշատակարաններում: Կնոջ անունն է Մեղա:
ՀԱՄԱՉԱՍՊ—անեցի եպիսկոպոս, Հաղբատի վանահայր: Առաջին անգամ հիշվում է 1242 թ. մի արձանագրության մեջ, 1245-ին կառուցել է վանքի հանրահայտ զանգակատունը եղբոր՝ Գրիգոր Անեցու օգնությամբ: 1257-ին կառուցել է մի մեծ ժամատուն, եղել է մշակույթի հովանավոր:
ՀՈՎՀԱՆՆԵՍ Ա—Անիի եպիսկոպոս (որդի Աբուղամրի), հիշվում է 1298—1313 թթ.:
ՀՈՎՀԱՆՆԵՍ Բ ՈՍԿԵՓՈՐԻԿ—Անիի եպիսկոպոս, գրիչ: Հիշվում է ԺԴ դարի վերջերին և ԺԵ դարի սկզբների մի շարք հիշատակարաններում (մինչև 1443 թ.):

ՀՈՎՀԱՆՆԵՍ—վարդապետ, Հոռոմոսի վանքի հիմնադիր և առաջին վանահայր (Ժ դարի 30—40-ական թթ.):

ՀՈՎՀԱՆՆԵՍ—Հոռոմոսի վանահայր, հիշվում է Հովհաննես Սմբատ թագավորի 1038 թ. արձանագրության մեջ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ—Հոռոմոսի վանքի միաբան, գրիչ և ծաղկող, հիշվում է 1181, 1187, 1198 թթ. հիշատակարաններում: Ավագ եղբորը՝ Վարդանին, որը նույն վանքի միաբան էր, համարում է իր ուսուցիչը, ուներ նաև աշխարհական եղբայր՝ Գրիգոր անունով:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ—Անիի վարդապետարանի ուսուցչապետ ԺԱ դարի 80-ական թվականներից, նշանավոր վարդապետ և մատենագիր: 1124 թվականից հետո մի կարճ ժամանակահատված ապաստանավորել է Անիի Մայր տաճարում (1129 թ. մահացել ու թաղվել է Հաղբատում):

ՀՈՎՀԱՆՆԵՍ—Անիի վարդապետարանում աշակերտել է Հովհաննես Սարկավագին, եղել Սամուել Անեցու դասընկերը, որը և հիշում է նրան (ԺԱ դարի վերջ—ԺԲ դարի սկիզբ):

ՀՈՎՀԱՆՆԵՍ—1211 թ. գրել է Սահակ Անեցու ստացած «Հաղբատի Ավետարանի» հիշատակարանը Անիում, կամ Արջո Առիճում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ (ՄԱԳԻՍՏՐՈՍԵՆՑ)—Արջո Առիճի վանահայր, հիշվում է 1298 թ. Հակոբ Անեցու ստացած Ավետարանի հիշատակարանում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ—քահանա, Հոռոմեանց Կոստանդին քահանայի որդին, 1213 թ. մի շարք նվիրատվություններ է կատարել Արջո Առիճի վանքին, իսկ 1215-ին՝ Բագնայրին:

ՀՈՎՀԱՆՆԵՍ—Խծկոնքի վանահայր, հիշվում է 1211 թ. Զաքարե ամիրասպասալարի նվիրատվական արձանագրության մեջ, ինչպես նաև 1213 և 1221 թթ. արձանագրություններում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ—Խծկոնքի միաբան, երեց, հիշվում է 1233 թ. մի արձանագրության մեջ (այդ ժամանակ արդեն մահացած էր):

ՀՈՎՀԱՆՆԵՍ—երեց, հիշվում է 1401 թ. մի հիշատակարանում «Անեցի» մականունով:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԱՄԲԵՑԻ—վարդապետ, 1786 թ. նորոգել է Հոռոմոսի վանքը:

ՀՈՎՍԵՓ—Բագնայրի վանքի փակակալ, հիշվում է 1262 թ. երկու նվիրատվական արձանագրություններում («Յուսէփ փակակալ...»):

ՀՈՎՍԵՓ—Հոռոմոսի վանահայր, հիշվում է 1269 թ. մի նվիրատվական արձանագրության մեջ («հայր Յուսէփ...»):

ՄԱՐԳԱՐԵ—աբեղա, գրիչ, մանրանկարիչ, 1209 թ. մի ավետարան է կազմել Հառիճում, իսկ 1211 թ. Սահակ Անեցու ստացած «Հաղբատի Ավետարանը» լրացրել ու նկարազարդել է Անիի Բեխենց վանքում:

ՄԱՐԳԱՐԵ—քահանա (միայնավոր), 1208 թ. նրա համար Խծկոնքում մահարձան-խաչքար է կանգնեցրել իր աշակերտը:

ՄԱՐԿՈՍ—անեցի երեց, հիշվում է քաղաքի Ս. Սարգիս (Սիթի Պահլավունու) եկեղեցու մի արձանագրության մեջ:

ՄԻՔԱՅԵԼ ՏԵՐ ՄԻՆԱՍՅԱՆ—վարդապետ (1851—1918՞), Անիի վերջին հոգևորականը՝ «Անիի վանահայրը»:

ՄԽԻԹԱՐ ԱՆԵՑԻ—Անիի Կաթողիկեի փակակալ, մատենագիր և թարգմանիչ (ԺԲ—ԺԳ դ. սկիզբ):

ՄԽԹԻԱՐ ԱՆԵՑԻ—անեցի քահանա, Հակոբ քահանայի և Սեդայի որդին, գրիչ, ծաղկող, կազմարար: Հիշվում է Սուլթանիայում իր գրած 1321, 1334, 1338, 1357 թթ. հիշատակարաններում:

ՄԽԻԹԱՐ ԲԱԳՆԱՅՐԵՑԻ—Բագնայրի վանահայր, 1047 թ. ուղեկցել է կաթողիկոս Պետրոս Գետադարձին՝ Արծն ուղևորվելիս:

ՄԽԻԹԱՐ ՏԵՂԵՐՑԻ—Անիի եպիսկոպոս ԺԳ դ. 70-ական թթ.:

ՄԽԻԹԱՐ—Հոռոմոսի վանքի միաբան, հիշվում է 1181 թ. Հովհաննես գըրչի հիշատակարանում:

ՄԽԻԹԱՐ—Հոռոմոսի վանահայր (նույնը նախորդի հետ՞), 1198 թ. նորոգել է վանքի ջրատարը, վանական այգի է տնկել Փարպիում: Հիշվում է նաև 1201 և 1211 թթ.:

ՄԽԻԹԱՐԻԿ—Անի կաթողիկոսարանի սպասավորներից՝ ԺԱ դ. կեսեր (Մատթեոս Ուռհայեցի):

ՄԿՐՏԻՉ—աբեղա, որդի Ռատի, 1258 թ. իր հոգևոր եղբայր Գրիգորի հետ նորոգել է Հոռոմոսի վանքի՝ Արուճում և Փարպիում գտնվող հընձանները:

ՄՈՎՍԵՍ—Անիի Ս. Աստվածածին (Խամբուշենց) եկեղեցու քահանա, հիշվում է 1054 թ. մի արձանագրության մեջ:

ՆԵՐՍԵՍ—անեցի եպիսկոպոս, հիշվում է 1156 թ. Տիգրան Հոնենցի կառուցած Ս. Գրիգոր Լուսավորչի եկեղեցու արձանագրություններից մեկում, որի քարը պատկանել է ավելի հին կառույցի:

ՆԵՐՍԵՍ—անեցի գրիչ «քարտուղար», 1357 թ. Անիում գրել է պարոն Սահլի հիշատակարանը Ս. Առաքելոցին նվիրաբերված «Կեռան թագուհու և Հեթում արքայորդու Ավետարանում»:

ՊԵՏՐՈՍ Ա ԳԵՏԱԴԱՐՁ—Ամենայն Հայոց կաթողիկոս 1019—1058:

ՊԵՏՐՈՍ—երեց, 1174 թ. նվիրատվություն է կատարել Հոռոմոսի վանքին:

ՊԵՏՐՈՍ—Հոռոմոսի վանահայր, 1195 թ. մահացած միաբանների համար մատուցվող պատարագների քանակը սահմանող արձանագրություն է թողել:

ՊԵՏՐՈՍ—Հոռոմոսի վանահայր, վարդապետ, հիշվում է 1851 թ.:

ՊՈՂՈՍ—Խծկոնքի վանահայր, վարդապետ, հիշվում է տեղի 1208, 1221, 1233 թթ. արձանագրություններում և 1236 թ. վանքին նվիրված մի Ավետարանի հիշատակարանում:

ՍԱՀԱԿ—Անիի Աբուխանմի եկեղեցու քահանա, հիշվում է տեղի անթվական արձանագրություններից մեկում:

ՍԱՀԱԿ—Անեցի քահանա, Ռիմանոսի և Կատայի որդին, ուսանել է Հաղբատում, 1211 թ. ստացել է մի մեծարժեք Ավետարան (ՄՄ. № 6288 «Հաղբատի Ավետարան»):

ՍԱՄՈՒԵԼ ԱՆԵՑԻ—Անիի Կաթողիկեի ավագերեց, մատենագիր (ԺԲ դար):

ՍԱՐԳԻՍ Ա ՅԵՎԱՆՑԻ—Ամենայն Հայոց կաթողիկոս 992—1019 թթ.:

ՍԱՐԳԻՍ Ա—Անիի եպիսկոպոս (որդի Ապիրատի), հիշվում է (1187-ին՝ որպես քահանա) 1208—1220 թթ.:

ՍԱՐԳԻՍ Բ—Անիի եպիսկոպոս (որդի Մագիստրոսի), հիշվում է 1245—1262 թթ.:

ՍԱՐԳԻՍ—Հոռոմոսի վանահայր, 969 թ. մասնակցել է Անիի առաջին եկեղեցական ժողովին, հիմնադրել է Անիի մերձակա Կարմիր վանքի Ս. Գրիգոր Լուսավորչի եկեղեցին, բայց մինչև կառույցի ավարտը 980 թ. մահացել է:

ՍԱՐԳԻՍ—Հոռոմոսի վանահայր, հիշվում է Հովհաննես Սմբատ թագավորի 1036 թ. արձանագրության մեջ:

ՍԱՐԳԻՍ—Անեցի, կաթողիկոսարանի նշանավոր վարդապետ: Նամակագրական կապ է ունեցել Գրիգոր Մագիստրոսի հետ, որի ուսումնակիցն է եղել ժամանակին: Պահպանվել է Սարգսի մի ինքնագիր հիշատակարանը 1041 թ., ինչպես նաև նրա հեղինակած մի քանի գանձ:

ՍԱՐԳԻՍ—Անիի Ս. Առաքելոց եկեղեցու քահանա, հիշվում է այդ եկեղեցուն նվիրաբերված մի գրակալի 1164 թ. արձանագրության մեջ:

ՍԱՐԳԻՍ—Հոռոմոսի միաբան, 1198 թ. օժանդակել է Մխիթար վանահորը վանքի ջրատարի նորոգման գործում, Հոռոմոսի համար հողակտոր է գնել Փարպիում:

ՍԱՐԳԻՍ—անեցի կուսակրոն քահանա, հիշվում է 1211 թ. Մարգարե գրչի «Հաղբատի Ավետարանում» գրած հիշատակարանում: Եղբոր անունն է Շահեր:

ՍԱՐԳԻՍ—Խծկոնքի միաբան, հիշվում է 1236 թ. վանքին ընծայված Ավետարանի հիշատակարանում:

ՍԱՐԳԻՍ—Անիի մերձակա Ծմակ գյուղի ավագերեց (որդի Գրիգոր քահանայի), 1233 թ. նվիրատվություն է կատարել Բագնայրին:

ՍԱՐԳԻՍ—սարկավագ, Անիի Կաթողիկեի սպասավոր, հիշվում է 1236 թ. Նացուալ նվիրատուի հիշատակարանում:

ՍԱՐԳԻՍ—Հոռոմոսի միաբան, վարդապետ, հիշվում է 1246 թ. արձանագրության մեջ:

ՍԱՐԳԻՍ—անեցի քահանա (որդի Եփրեմ քահանայի), որը գաղթել է Սուլթանիա: 1326 թ. հիշվում է եղբոր՝ Գրիգոր քահանայի ստացած ձեռագրի հիշատակարանում (Երուսաղեմ № 453):

ՍԱՐԳԻՍ—Անիի մերձակա Կարմիր վանքի վանահայր, հիշվում է 1274 թ.

ՍԱՐԳԻՍ—կրոնավոր, Հոռոմոսի միաբան, հիշվում է 1347 թ. վանքին նվիրաբերված արծաթակազմ Ավետարանի կազմի դրվագագիր հիշատակագրության մեջ:

ՍԱՐԳԻՍ—անեցի երեց, քաղաքի Ս. Աստվածածին (Խամբուշենց) եկեղեցու սպասավոր: Հիշվում է ոմն Արքայի անթվական արձանագրության մեջ:

ՍԱՐԳԻՍ—անեցի քահանա, հիշվում է քաղաքի Ս. Սարգիս (Սարկավագի) եկեղեցու մի անթվական արձանագրության մեջ: Կնոջ անունն է Գոհար խաթուն:

ՍԱՐԳԻՍ—վարդապետ: Անունն արձանագրված է Անիի Ս. Սարգիս (Սարկավագի) եկեղեցու որմին:

ՍԱՐԿԱՎԱԳ—անեցի քահանա (հավանորեն Սամուել Անեցու որդին), 1151 թ. հիմնովին նորոգել է քաղաքի Ս. Սարգիս (Սարկավագի) եկեղեցին:

ՍԱՐԿԱՎԱԳ—անեցի քահանա, 1292 թ. քաղաքում մի ձեռագրի օրինակ է շնորհել Երզնկայից այստեղ ապաստանած Ահարոն վարդապետին:

ՍԱՐԿԱՎԱԳ—Անիի Կաթողիկեի ավագերեց, հիշվում է 1286 թ. մի նվիրատվական արձանագրության մեջ:

ՍԻՄԵՈՆ—անեցի քահանա, հիշվում է ԺԳ դարի սկզբին Բեխենց վանքում գրված ձեռագրի հիշատակարանում, որպես միջնորդ գնորդ-ստացողի և տեղի գրչատան միջև:

ՍԻՄԵՈՆ (Մարնդունեցի)—անեցի հոգևորական՝ մենակյաց, 1292 թ. օգնություն է ցուցաբերել Երզնկայից Անի եկած Ահարոն վարդապետին և հիշվում է վերջինիս գրած հիշատակարանում:

ՍԻՄԵՈՆ—Հոռոմոսի վանքի փակակալ, հիշվում է 1269 թ. մի նվիրատվական արձանագրության մեջ:

ՍԻՄԵՎՈՆ—Բագնայրի վանահայր, վարդապետ: Հիշվում է վանքի 1206, 1209, 1229, 1233, 1234 թթ. արձանագրություններում և «Բագնայրի Ավետարանի» (ՄՄ № 1519) 1232 թ. հիշատակարանում:

ՍՈՂՈՄՈՆ—Հոռոմոսի վանահայր, հիշվում է վանքի 986 թ. մի նվիրատվական արձանագրության մեջ, ինչպես նաև Անիի մերձակա Կարմիր վանքի 985 թ. շինարարական արձանագրության մեջ, որից երևում է, որ հենց նա է այդ վանքի շինարարությունն ավարտել:

ՍՏԵՓԱՆՈՍ ԱՍՈՂԻԿ—վարդապետ, պատմագիր, որը սերտորեն կապված էր Անիի կաթողիկոսարանի հետ (Ժ դարի վերջ ԺԱ դարի սկիզբ):

ՍՏԵՓԱՆՈՍ—Բագնայրի վանահայր, հիշվում է 1042 թ. մի արձանագրության մեջ:

ՍՏԵՓԱՆՈՍ—քահանա, Անիի կաթողիկոսարանի սպասավոր, հիշվում է Գրիգոր Մագիստրոսի՝ Պետրոս Գետադարձին հղած նամակներից մեկում:

ՍՏԵՓԱՆՈՍ—անեցի քահանա, Կիրակոսի և Խելոքի որդին, հիշվում է 1298 թ. եղբոր՝ Հակոբի ստացած Ավետարանի հիշատակարանում:

ՍՏԵՓԱՆՈՍ—գրիչ (որդի Գելանի), 1308 թ. հիշատակարան է գրել «Բագնայրի Ավետարանում»:

ՍՏԵՓԱՆՈՍ—Հոռոմոսի վանահայր, հիշվում է 1336 թ. արձանագրության և 1347 թ. վանքին նվիրաբերված Ավետարանի կազմի հիշատակագրության մեջ:

ՎԱՀԱՆ—Հոռոմոսի վանահայր, հիշվում է 1326 թ. արձանագրության մեջ:

ՎԱՆԱԿԱՆ—Անիի Բեխենց վանքի միաբան, ԺԳ դարի սկզբներին կազմել է մի Ավետարան (ՄՄ № 5554):

ՎԱՐԴԱՆ—Անիի եպիսկոպոս, մասնակցել է 1307 թ. Սսի ժողովին, հիշվում է նաև 1320 թ. Մրենի մի արձանագրության մեջ:

ՎԱՐԴԱՆ ԱՆԵՑԻ—վարդապետ, բանաստեղծ: Հեղինակ է մի բարձրարվեստ ներբողի (հավանաբար Ժ—ԺԱ դդ.):

ՎԱՐԴԱՆ ՍԱՆԱՀՆԵՑԻ—Անիի կաթողիկոսարանի սպասավոր ԺԱ դ. առաջին կեսին (Մատթեոս Ուռհայեցի):

ՎԱՐԴԱՆ—Հոռոմոսի միաբան (միայնավոր), հիշվում է 1181 և 1187 թթ. կրտսեր եղբոր՝ Հովհաննեսի գրած հիշատակարաններում (վերջինիս ուսուցիչն էր):

ՎԱՐԴԱՆ—Արջո Առիճի վանահայր, հիշվում է ոմն Առյուծի և նրա կին Շուշիկի անթվական նվիրատվական արձանագրության տեղ:

ՎԱՐԴԱՆ—վարդապետ, Հոռոմոսում նորոգման աշխատանքներ է կատարել 1825 թ.:

ՏԻՐԱՆՈՒՆ—Անիի կթողիկոսարանի վարդապետ ԺԱ դ. սկզբներին: Մատթեոս Ուռհայեցին նրան կոչում է «իմաստասէր Տիրանուն Կապանեցի»:

ՏԻՐԱՑՈՒ—Անիի Բեխենց վանքի միաբան, գրիչ, ծաղկող: ԺԳ դ. սկզբներին մասնակցել է մի Ավետարանի ստեղծման աշխատանքին (ՄՄ № 5554), ենթադրվում է, որ նա է ընդօրինակել նաև «Թարգմանչաց Ավետարանը» (ՄՄ 2743):

ՏՐԴԱՏ—անեցի քահանա (որդի Սոսթենես քահանայի), 1193 թ. կնոջ՝ Խուշուշի հետ նորոգել է Անիի Ս. Փրկչի եկեղեցին, կառուցել ժամատուն և բազմաթիվ նվիրատվություններ կատարել:

ՔԱՀԱՆԱ—Անեցի հոգևորական, հիշվում է 1307 թ. Անիի Ներքին Բերդի Ս. Հովհաննես եկեղեցու պատին թողած արձանագրության մեջ:

ՔՐԻՍՏԱՓՈՐ—Բագնայրի միաբան (վանահայր՞), հիշվում է ԺԳ դարի մի անթվական արձանագրության մեջ:

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ